քննողական հայեացք ձգեց Ասլանի երեսին, մի քանի վայրկեան նայեց նրա վրայ, յետոյ ասաց.

— Խնդրեմ, ներս համեցէք:

Նա տարաւ մեզ մի մաքուր սենեակ, որը կահաւորուած էր կիսաարեւելեան եւ կիսաեւրոպական ճաշակով: Պատերի մօտ դրած էին երկար թախտեր, պատած գեղեցիկ գորգերով ու բարձերով, իսկ մէջտեղում՝ մի բոլորակ սեղան, որի վրայ նա դրեց իր ձեռքի ճրագը:

— Ի՞նչ կը կամենայիք, — հարցրեց նա մի այնպիսի եղանակով, որպէս հիւրանոցի տէրը դիմում է իր այցելուին:

— Տոեցէք խմելու մի բան, — ասաց Ասլանը:

Նա դուրս եկաւ եւ մի քանի րոպէից յետոյ վերադարձաւ, բերելով երկու շիշ գինի եւ երկու բաժակներ, որ գլխարկի նման անց էր կացրել շիշերի գլխին, դրեց սեղանի վրայ, ասելով.

Բաղէշու գինի է, մնաց մէկ շիշ միայն, այն էլ, եթէ հանգուցեալ հայրս գերեզմանից դուրս գայ, խնդրէ, չեմ տայ, ինձ համար եմ պահել:

— Դուք ամէն լաւ բան ձեզ համար էք պահում, Թէոս ախպեր, — ասաց Ասլանը ծիծաղելով:

— Ապա ի՞նչ անեմ, «մարգարեն առաջ իր հոգու համար է աղօթում», — պատասխանեց նա թուրքի առածով, յետոյ բաժակները առանձին-առանձին վեր առեց եւ, նրանց մաքրութիւնը փորձելու համար, բռնեց ճրագի լոյսի առջեւ, նայեց եւ, գոհ չմնալով, առեց իր ուսի վրայից անձեռոցիկը, սկսեց նորից սրբել:

Թէոս ախպոր վարողութիւնը Ասլանի հետ՝ ոչ պանդոկատիրոջ հաճոյամոլութեան էր նմանում, որ աշխատում է գոհացնել իր այցելուին, նրա գրպանները դատարկելու համար, եւ ոչ տանտիրոջ վարողութիւն էր, որ աշխատում է պատոել իր պատահական հիւրին, որ նա շնորհակալութեամբ հեռանայ: Նրանց մէջ երեւում էր ինչ-որ մտերմութիւն, թէեւ սրճանոց պահողները առհասարակ քաղաքավարի են լինում իրանց յաճախորդների հետ, որպէս քահանան իր ժամասէր ծուխի հետ:

Ասլանը ածեց բաժակները. գինին Թէոսի գովածից աւելի ազնիւ էր: Երբ նա նկատեց, որ մենք գոհ մնացինք, դրեց սեղանի վրայ եւ մի կտոր ապխտած միս, խորհուրդ տալով միասին ճաշակել, ասելով, թէ այնպէս աւելի համով է լինում գինին: